ԷԼԵԿՇԻՆ

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

**ՔՊԼ 17787**

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է «02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.» «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ, ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Փ. 9-1

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**
*ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ*

(ստորագրությունը)
Կ.Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ 02565827

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

## ՔՊԼ N 17787 - 1

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՍԱՄՎԵԼ ՍԱՄՍՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ 011058369

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության ոլորտը)

02. 10. 2020թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

(ստորագրությունը)

Ա. ԴՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

# ՔՊԼ N 17787 - 2

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԱՇՈՏ ՍԱՇԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ 005212725

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության ոլորտը)

02. 10. 2020թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

(ստորագրությունը)

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

# ՔՊԼ N 17787 - 9

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՍԱՄՎԵԼ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՔՈՉԱՐՅԱՆ AK0589253

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

(գործունեության ոլորտը)

02. 10. 2020թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

(ստորագրությունը)

Ա. ԴՈՒԼԱՐՅԱՆ
(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

# Լրացուցիչ պահանջներ

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի <<Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մանկապարտեզի հիմնանորոգումն իրականացնող շինարարական կազմակերպության կողմից անհրաժեշտ է ներկայացնել «Քաղաքաշինական բնագավառում բնակելի, հասարակական և արտադրական» ոլորտի շինարարության իրականացման լիցենզիա
2. «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանվում են հետևյալ պայմանները՝ մասնակցի աշխատակազմում պետք ընգրկված լինի՝ առնվազն մեկ աշխատակից, որը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն, ինժեներ-շինարարի որակավորում, ինչպես նաև մասնագիտական առնվազն մեկ տարվա փորձառություն համանման աշխատանքների /արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն/ ոլորտում
3. Շինարարական կազմակերպությունը պետք է համալրված լինի մասնագետներով՝ ավաղչի, հարդարող, սալիկապատող, սանտեխնիկ, էլեկտրիկ և այլն
4. «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանվում են հետևյալ պայմանները՝ աշխատանքների կատարման համար պահանջվում է թվով մեկ հատ՝ բեռնատար ինքնաթափ մեքենա
5. Անհրաժեշտ են նաև հետևյալ սարքեր-սարքավորումները մեխանիկական պտուտակահան, մուրճ, բահ, հարթաչափ և այլն
6. Պայմանագրի կատարման համար պահանջվող լիցենզիայի տեսակն է՝ շինարարության իրականացում ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
7. Շինարարության ընթացքում օգտագործվող շինանյութերի տեխնիկական բնութագրերը և երշխիքային ժամկետները /տես աղյուսակներ 1 և 2/

*ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի <<Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մանկապարտեզի հիմնանորոգման <u>համար օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներ</u>*

*Աղյուսակ 1*

| N | ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏ |
|---|---|---|
| 1. | Ցեմենտ/ավազե խառնուրդ | 3 տարի |
| 2. | Գիպսոնիտե սվաղ | 3 տարի |
| 3. | Հատակների երեսապատման նյութեր | 3 տարի |
| 4. | Մետաղապլաստե բացվածքներ | 3 տարի |
| 5. | Էլեկտրականության լարեր և սարքեր | 3 տարի |
| 6. | Լամինատից հատակներ | 3 տարի |
| 7. | Պոլիէթիլենե խողովակներ և կցամասեր | 3 տարի |
| 8. | Պոլիվինիքլորիդե խողովակներ և կցամասեր | 3 տարի |
| 9. | Բետոն | 3 տարի |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

*ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի <<Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մանկապարտեզի հիմնանորոգման <u>աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներ</u>*

*Աղյուսակ 2*

| N | Անվանում | Չափ-ման միավոր | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Հատակի պրեսգրանիտե սալիկ | քմ | Բարձրորակ /հաստությունը` 8 մմ/ |
| 2. | Ց/ավազային շաղախ | խմ | Բետոնի դասը B-12.5 |
| 3. | Մետաղապլաստե բացվածքներ | քմ | Բարձրորակ |
| 4. | Էլեկտրականության լարեր և սարքեր | մ/հատ | Բարձրորակ |
| 5. | Լամինատից հատակներ | քմ | Բարձրորակ |
| 6. | Պոլիվինիքլորիդե խողովակներ և կցամասեր | մ/հատ | Բարձրորակ |
| 7. | Պոլիէթիլենե խողովակներ և կցամասեր | մ/հատ | Բարձրորակ |
| 8. | Բետոն | խմ | Բետոնի դասը B-20 |
| | | | |

*Ապրանքները պետք է լինեն չօգտագործված

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Ամիսներ 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ուժեղացման աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 2 | քանդման աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 3 | Մուտքի վերանորոգման և կիսածածկերի կառուցման աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 4 | Արտաքին աստիճանների և էվակուցիոն կամրջակի կառուցում | | | | | | | | | | | | |
| 5 | Հարդարման աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 6 | Ներքին ջրամատակարարում և կոյուղի | | | | | | | | | | | | |
| 7 | Ներքին ջեռուցում և օդափոխություն | | | | | | | | | | | | |
| 8 | Ներքին գազամատակարարում | | | | | | | | | | | | |
| 9 | Էլեկտրամոնտաժային աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 10 | Բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | |

Շինարարության տևողությունը 12 ամիս

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ԴԱՎԹՅԱՆ | | ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ <<ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ | ՊԱՏՎԵՐ |
| Ն. Գ. Ճ. | Գ. ԴՈՒՄԻԿՅԱՆ | | | ԹԵՐԹ / ԹԵՐԹԵՐ |
| | | | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ | ՃՇ- |
| | | | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ԷԼԵԿՇԻՆ |

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՑԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(«ՔԾՓԿ ԲԲԸ»)

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼԻՑԵՆԶԻԱ. ՔՊԼ-001425, I ԴԱՍ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԱԼԱՎԵՐԴՈՒ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ №2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ – 2024

«ՔԾՓԿ» ԲԲԸ
Ելք 15/326
«22» 11 2024 թ.

«Հաստատում եմ»
«ՔԾՓԿ» ԲԲԸ Գլխ. տնօրեն
---------Ա. Գյուլխասյան
«-22» 11---------- 2024թ.

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ք. Ալավերդու Զորավար Անդրանիկ փողոց №2/1 հասցեում գտնվող «Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ

*Հետազննությունը կատարվել է Ալավերդի համայնքի (սեփ. վկ.09062021-06-0022) ղեկավար Դ. Ղումաշյանի առ 05.04.2024թ. № ԱՀ-1204/24 դիմում-գրության համաձայն:*

Հետազոտվող շենքի տեխնիկական վիճակը գնահատվել է ըստ գործող նորմատիվ փաստաթղթերի (ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծային նորմեր» և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման /անձնագրավորման/ մեթոդական ցուցումներ»), ինչպես նաև ՀՀՇՆ 20.06.2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում» հիմնական դրույթների:

Ստորև բերվում են շենքի տեխնիկական նկարագիրն ու զննման արդյունքները:

Հետազոտվող շենքն իրենից ներկայացնում է տիպարային նախագծով 1958թ. կառուցված երկհարկ (նաև մասնակի նկուղային հարկով) քարաշեն հասարակական շինություն:

Մանկապարտեզի շենքն հատակագծում ունի ուղղանկյունաձև տեսք՝ 12.56x31.62մ ընդհանուր եզրագծային չափերով, որի բակային և կողաճակատներում իրականացված են 1.55մ լայնությամբ П-աձև հատակագծով պատշգամբի հարթակ:



նկ.1 Շենքի ընդհանուր տեսքը գլխավոր ճակատից







նկ. 2, 3, 4, Շենքի ընդհանուր տեսքերը տարբեր ճակատներից







նկ. 5, 6, 7 Շենքի մասնակի նկուղային հարկի մուտքը արտաքին սանդուղքով







նկ. 8, 9, 10 Շենքի արտաքին սանդուղքի և բարձակային հարթակի վնասված տեղամասեր







նկ. 11, 12, 13 Շենքի մաշված-վնասված արտաքին աստիճաններ և բարձակային հարթակ







նկ. 14, 15, 16 Մասնակի նկուղի պատերի, ծածկի և հատակի վիճակները







նկ. 17, 18, 19 Շենքի նկուղային հարկի չգործող մարզադահլիճի պատերի, ծածկի և հատակի վիճակները







նկ. 20, 21, 22 Շենքի նկուղային հարկի չգործող լվացքատան պատերի, ծածկի և հատակի վիճակները







նկ. 23, 24, 25  Շենքի մուտքի հատվածամասի պատերի և սանդուղքի վիճակները







նկ. 26, 27, 28 Շենքի առաջին հարկի պատերի, ծածկի և հատակների վիճակները







նկ. 29, 30, 31 Շենքի առաջին հարկի մաշված-վնասված հատակներ և հարդարանք







նկ. 32, 33, 34 Շենքի երկրորդ հարկի պատերի, ծածկի և հատակների վիճակները







նկ. 35, 36, 37 Շենքի երկրորդ հարկի մաշված-վնասված հատակներ և հարդարանք

Շենքի գլխավոր մուտքն իրականացված է բակային ճակատի կենտրոնում՝ արտաքին սանդուղքով և բարձակային հարթակով, իսկ գլխավոր ճակատից ունի օժանդակ մուտք: Մասնակի նկուղային հարկի մուտքերն իրականացված են բակային երկայնական ճակատից ու ձախակողմյան կողաճակատից :

Մասնակի նկուղային հարկի (նախկինում եղել է մարզադահլիճ և լցվացքատուն) բարձրությունը հատակից մինչև ծածկ 3.4մ է, իսկ առաջին և երկրորդ հարկերի բարձրությունը 3.3մ է(հատակից մինչև ծածկը 2.9մ է):

Շենքի կոնստրուկտիվ համակարգն իրականացված է երկայնական և լայնական պատերով ու միջհարկային ծածկերով:

Շենքի պատերի հիմքերը ժապավենային են, իրականացված խամքարաբետոնից:

Մասնակի նկուղային հարկի պատերն ունեն 60սմ հաստություն և իրականացված են բազալտքարերից ու տուֆաքարերից, ցեմենտ ավազային շաղախով՝ գետնախարսխային հատվածամասում (30սմ բարձրությամբ) «քուրքատաշ» երեսաշարով, իսկ ճակատներում սրբատաշ երեսաշարերով:

Առաջին և երկրորդ հարկի պատերն ունեն 50սմ հաստություն և իրականացված են տուֆաքարերից, «միդիս» տիպի շարվածքով, ցեմենտ-ավազային շաղախով , սրբատաշ ճակատներով:

Բացվածքների բարավորներն իրականացված են միաձույլ երկաթբետոնից՝ ճակատներում սրբատաշ քարերի երեսաշարով:

Ծածկերն իրականացված են միաձույլ երկաթբետոնից՝ հեծանային սալի տեսքով:

Միջնորմներն ունեն 10-20սմ հաստություններ և իրականացված են խարամաբետոնե սալիկներից ու բլոկներից:

Բակային ճակատի արտաքին սանդուղքն իրականացված է միաձույլ երկաթբետոնե սյուներից, հեծաններից, հարթակից ու հավաքովի երկաթբետոնե աստիճանամատերից՝ պողպատե սանդղահեծաններով (27 համարի երկտավր), իսկ ներքին սանդուղքն իրականացված է հավաքովի և միաձույլ երկաթբետոնե էլեմենտներից բետոնե հարթակներով՝ երբեմն պողպատե սանդղահեծաններով:

Դռներն ու պատուհաններն իրականացված են փայտե և մետաղապլաստե էլեմենտներից:

Հատակներն իրականացված են տախտակից, մանրատախտակից, լինոլեումից, փայթոցազորգից, խեցեսալիկներից և բետոնից (նկուղում):

Տանիքը քառալանջ է, իրականացված փայտե էլեմենտներից և ծածկված ցինկապատ ալիքավոր թերթերով՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

*Հետազննությամբ պարզվել է.*

- կառույցն լինելով հին շինություն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով չի բավարարում գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի որոշ դրույթներին, մասնավորապես երկայնական ու լայնական պատերի միջև հեռավորությունները գերազանցում են նորմատիվային սահմանված առավելագույն չափերը և այլն;
- տանիքի ծածկույթը, ընդհանուր առմամբ, մաշված-հնացած է (կան վնասված տեղամասեր) և ենթակա է փոխարինման՝ փայտանյութի մասնակի վերանորոգումով (նկ.1-4);
- բարձակային հարթակի ծածկույթը ունի վնասված տեղամասեր, արտաքին սանդուղքի ճակատային հեծանն ու սյուների վերին հատվածամասերը քայքայված-վթարված են և ենթակա են վերակառուցման (նկ.5-10 )
- մասնակի նկուղային հարկի ծածկի առանձին սալեր ու հեծաններ ունեն մերկացած ամրաններով տեղամասեր (նկ.17-22 )
- որոշ միջնորմներ ճաքած-վնասված են և կրող Լլեմենտներից տարանջատված են (նկ. 20-27)
- հատակները մեծավ-մասամբ մաշված-վնասված են (նկ.18-37 )
- փայտե դռներն ու պատուհանները մաշված-վնասված են (նկ. 1-4)
- առանձին սենյակներում կան վնասված ներքին հարդարանքներ (նկ.14-31 )
- բարձակային հարթակի ծածկույթն ունի ճաքած և քայքայված տեղամասեր ու աստիճաններ (նկ. 11-13)։

*Եզրակացվում է.*

Ելնելով հետազննության արդյունքներից և վերը նշված նորմերի պահանջներից (շենքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում), ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ք. Ալավերդու Զորավար Անդրանիկ փող. №2/1 հասցեում գտնվող «Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնական կրող և ինքնակրող էլեմենտների տեխնիկական վիճակն, ընդհանուր առմամբ, գնահատվում է «բավարար», իսկ որոշ ինքնակրող էլեմենտների համար՝ «անբավարար», սակայն շենքի ընդհանուր վնասվածության մակարդակը դասվում է 2-րդ (երկրորդ) աստիճանի։

Մասնաշենքի վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակը, ըստ ՀՀՇՆ 20-06-2014 նորմերի գլուխ 7, կետ 30, ենթակետ 2-ի և հավելված 1-ի ընդունվում է սեյսմազինվածության բարձրացում։

Մասնաշենքի հետագա բնականոն ու անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ հիմնանորոգման, վերակառուցման և սեյսմազինվածության բարձրացման աշխատանքներ.

- Ճշգրտել տարածքի սեյսմաերկրաբանական պայմանները:
- Երկայնական ու լայնական պատերի միջև հեռավորությունները նորմատիվային թույլատրելի չափերի բերելու նպատակով մասնաշենքում իրագործել, սկսած հիմքերից միաձույլ երկաթբետոնե լայնական շրջանակներ:
- Ապամոնտաժել և վերականգնել արտաքին սանդուղքը:
- Կատարել մասնաշենքի գլխավոր մուտքի առաջին հարկի աջակողմյա թեքահարթակի վերականգնումը:
- Մասնաշենքում կատարել հիմնանորոգման և վերահատակագծման աշխատանքներ:
- Մասնաշենքի շուրջ իրագործել կանոնակարգված ջրահեռացմամբ նոր սալվածք:

Բոլոր նշված շինարարական աշխատանքները պետք է կատարել գործող շիննորմերին համապատասխան մշակված նախագծի համաձայն:

Մասնաշենքի պահպանումն ուժեղացման-վերականգնման աշխատանքների կատարման պայմանով, կամ դրա ապամոնտաժումը պետք է որոշել տեխնիկա-տնտեսական հաշվարկի համաձայն:

Լաբորատորիայի վարիչ՝ Ռ. Խաչատրյան

Ճարտարագետ՝ Ա. Սուքիասյան

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ